

**ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ-ՀԱՐՑԱՐԱՆԻ
ԽՆԴՐԻ ՇՈՒՐՉ**

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2006 թ. լրացակ Ստեփան Լիսիցյանի «Ազգագրական հարցարանի» 60, իսկ 2007 թ.՝ Գրիգոր Խալաթյանցի «Ծրագրի» 120-ամյակները: Անհնար է հասկանալ հայ գիտական ազգագրության ձևավորման ու զարգացման հիմնահարցերն առանց դարակազմիկ նշանակություն ունեցող այդ ծրագրերի:

Ազգագրությունը հումանիտար այլ գիտությունների նման օգտվում է տարբեր բնույթի գրակոր սկզբնադրյուրներից, որոնք սփոված են հսկայական տարածության ու ժամանակի մեջ: Սակայն, ի տարբերություն այլ գիտությունների, ազգագրությունն ունի իր աղյուրագիտական հիմնական բազան՝ հանձին դաշտային ազգագրական նյութերի (այսուհետ՝ ԴԱՆ), որոնք ունեալ իրականությունից, կոնկրետ բանասացներից գրառված վկայություններ են, որոնց վրա էլ հիմնականում խարսխվում է ազգագրությունը:

Դեռևս XIX դ. կեսերին եվրոպական երկրներում ծավալվեց ակտիվ շարժում՝ գրառված ազգագրական նյութերը կանոնակարգելու ուղղությամբ: Դա մի շրջան էր, երբ հարյուրակոր մարդիկ մեկնում էին անծանոթ երկրներ՝ նպատակ ունենալով զրի առնել քաղաքակրթությունից մի կողմ մնացած և իրենց էթնիկական կենցաղն ու մշակույթը պահպանած հետամնաց ժողովուրդների և ցեղերի նիստուկացը, ընտանեկան բարքերն ու սովորույթները, հավատալիքները և այլն: Սակայն այդ հեռավոր վայրեր մեկնողների մեծ մասը պատահական մարդիկ էին, ազգագրությունից հեռու կանգնած, արկածներ որոնողներ: Չիմանալով տեղաբնիկների լեզուն, անծանոթ լինելով նրանց բարքերին՝ մեկնողները զրի էին առնում այն ամենը, ինչին անտեղյակ էր եվրոպական միջավայրը: Եվ այդ երկրների արիստիկները լցվեցին նման կարգի նյութերով: Ծանոթ չլինելով ԴԱՆ-ի գրառման սկզբունքներին ու մեթոդներին, չունենալով դաշտային նյութերի հավաքման ծրագրի-հարցարան, նրանց գրառած նյութերը համակարգված չէին, հաճախ իրարամերծ ու հակասական էին: Այդ իրավիճակն այլևս հանդուրժել չէր կարելի, ուստի ձեռնարկվեցին ազգագրական առաջին կանոնավոր ծրագրերի կազմման ու հրատարակման աշխատանքները: Արխիվներում կուտակված դաշտային նյութերի ուսումնահրությունը կյանքի կոչեց, այսպես կոչված, «առանձնասենյակային» հետազոտողների մի սերունդ, որոնք «դաշտ» չմեկնելով, հենվելով ձեռքի տակ եղած նյութերի վրա, ստեղծեցին ազգագրական հետազոտությունների գլուխգործոցներ (Էդուարդ Թեյլոր, Ջոն Ֆրեզեր և ուրիշներ):

¹ Թ. Ե. Յ. լ. օ. թ. Պերվոբյտնա կուլտուրա. Մ., 1939; Հ. Ֆ. Բ. գ. է. թ. Ռուկ ճյուղը, Երևան, 1989:

Այս երևույթը բնորոշ էր նաև հայ իրականությանը: XIX դ. առաջին կեսերին մեզանում ազգագրական լայն գործունեություն ծավալած անհատները՝ Ղուկաս Ինձիջյան, Մինաս Բժշկյանց, Խաչատուր Արովյան, Մեսրոպ Թաղիաղյան, Հարություն Ալամդարյան և ուրիշներ, գրավոր աղյուրների հետ, հետազոտությունների հիմքում դրեցին իրենց իսկ կողմից գրառված ԴԱՆ-ը, որոնք հիմք ծառայեցին ազգագրական բնույթի ուշագրավ աշխատանքներ ստեղծելու համար: Սակայն այս ժամանակամիջոցում մեզանում հայ ազգագրությունը մնաց սիրողական մակարդակի վրա, որպես սույն առանձին անհատների հետաքրքրությունների առարկա: Միուսմբ շարունակվեց նաև XIX դ. երկրորդ կեսերի շուրջ երեք տասնամյակների ընթացքում: Մինչև 1887 թ. Գր. Խալաթյանցի «Ծրագրի» հրատարակումը, ԴԱՆ-ի գրառումն ու շրջանառության մեջ դնելը մեծ փոփոխություններ չեր կրել դարի առաջին կեսերի համեմատ:

Այդ շրջանում, ինչպես եվրոպական երկրներում, այնպես էլ Հայաստանում, անցած պատմական փուլերի ազգագրական հետազոտությունները մեծ թիվ չեն կազմում: Ուսումնասիրողները հիմնականում կանգ են առել տվյալ ժամանակի բարքերի ու սովորույթների հետազոտմանը՝ հենվելով գրառված դաշտային նյութերի վրա: Սակայն դրանք թերի էին, համակարգված չէին, քանի որ մեզանում բացակայում էին այդ ամենի երաշխավորք համարվող հարցարանները: Եթե ավելացնենք, որ XIX դ. երկրորդ կեսերին դեռևս ճշտված չեր ազգագրության օրիկուն ու առարկան, այն բաժանված չէր հումանիտար որոշ գիտություններից, ապա պարզ կլինի ազգագրական այն հետազոտությունների թերություններն և ոչ ամրողական լինելը, որոնք լույս են տեսել մինչև 1880-ական թվականները:

1860-ական թվականները լույս տեսած Մ. Միանսարյանցի «Մտածողութիւնք ազգային լուսավորության մասին» հոդվածը, ըստ Մ. Վարդանյանի, «ծրագիր հարցարան» էր: «Մ. Միանսարյանցի սկսած գործն ունեցել է իր շարունակությունը: 19-րդ դարի 70-80-ական թվականներից սկսած՝ մշակութային արժեքների հավաքման գործը մասնագիտական մակարդակի վրա դնելու նպատակով լույս են տեսել մի շարք հարցարաններ: 1884 թ. Մ. Երիցյանը կազմել և հրատարակել է ազգագրական նյութերի հավաքման ուղեցույցը, 1887 թ. Գր. Խալաթյանցը՝ «Ծրագրի հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների», 1946 թ. Ստ. Լիսիցյանը՝ «Ազգագրական հարցարանը»²:

Հենվելով Մ. Վարդանյանի այս կարգի բնութագրումների վրա՝ Լ. Վարդանյանը գրել է. «Նշենք, որ հայ իրականության մեջ ծրագիր հարցարան (ընդգծումը – Մ. Պ.) կազմելու առաջին փորձերից մեկը դեռևս 19-րդ դ. կեսին, պատկանում է մշակութիւնի ականավոր ներկայացուցիչ, հրատարակիչ, հասարակական գործիչ Մ. Միանսարյանցին»³: Ըստ Դ. Վարդումյանի՝ «Արդեն բավականաշատ կուտակած նյութերի վրա կազմվեցին ազգագրական բնույթի առաջին հարցարանները (Մ. Միանսարյան՝ 1868, Ալ. Երիցյան՝ 1874)»⁴:

²Տե՛ս Մ. Վարդանյան Միանսարյանց: Կյանքն ու գործը, Երևան, 2002, էջ 21:

³Լ. Վարդանյան. Ստեփան Լիսիցյան և այլ հայության ազգագրության մասին գործը. Երևան, 2005, էջ 307.

⁴Դ. Վարդանյան և այլ հայության ազգագրության մասին գործը. Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 926:

XIX դ. 70–80-ական թվականներին հրատարակված աշխատանքներն⁵ ընդգրկում են ազգագրության սոսկ սահմանափակ բնագավառներ (ընտանիք, իրավական սովորություններ, վիճակագրական տվյալներ և այլն), որոնք չունեցան գործնական կիրառություն ու մնացին նեղ օգտագործման շրջանակներում։ Ուստի, վերոհիշյալ աշխատանքները, որոշ վերապահումներով, «ազգագրական բնույթի հարցարաններ» էին, բայց ոչ երբեք դաշտային ազգագրական նյութերի գրառման «ծրագիր–հարցարաններեւ։

Ուսանց կարծիքով, ծրագրի հավակնող հաջորդ աշխատանքը, 1874 թ. լույս տեսած Գ. Սրբանձոյանցի «Գրոց ու բրոց»-ն է։ Գրքի առաջին հրատարակության տիտղոսաթերթի վրա գրված է՝ «Ծրագրեաց» Գ. Վ. Սրունձտեանց⁶, իսկ «Իբրև նախերգանքի» վերջում՝ «Ծրագրողն» արտահայտությունը⁷։ Կարծես թե հեղինակը նկատի ունի դրանց «գրող», «կազմող» ժամանակակից իմաստները։ Սակայն, «Գրոց ու բրոց»-ի առաջին մասում Գ. Սրբանձոյանցը ներածականի այս անորոշությունը հստակեցնում է՝ գրելով. «Եվ որովհետև այս իմ գրական գործս իբրև հուշարար և ծրագիր (ընդգծումը – Ա. Պ.) կ’ուզեմ ներկայացընել, բավականեն ավելին չեմ ուզեր երկարել։ Որքան ձեռնհաս եղեր ու հավաքեր եմ և որքան ևս պատեհություն ունենամ հավաքելու, զանոնք ալ զատ գործ կ’ընեմ, կամ այլոց քան զիս հմտագունից և աշխատասիրաց կ’առաջարկեմե՞։

Ակնհայտ է, որ Գ. Սրբանձոյանցը «Գրոց ու բրոց»-ի առաջին մասը դիտում է որպես ծրագիր՝ այն առաջարկելով ուրիշներին ևս։ Շարադրանքի մի այլ հատվածում, նա ավելի է հատակեցնում այս միտքը. «Ո ՞ր տարավ և ո ՞ր բերավ զիս այս նկարագիրը, զոր միայն իբրև ծրագիր կգրեմ»⁸ (ընդգծումը – Ա. Պ.): Շուրջ հարյուր տարի է, ինչ տարբեր հետազոտողներ, հենվելով Գ. Սրբանձոյանցի այս բնութագրումների վրա, «Գրոց ու բրոց»-ը մերժել կամ համարել ու համարում են ազգագրական նյութերի գրառման ծրագիր–հարցարան։

XX դ. սկզբներին այս խնդրին առաջինն անդրադարձավ Գր. Խալաթյանցը։ XIX դ. 70-ական թվականներին սկսում են լույս տեսնել Գ. Սրբանձոյանցի երկերը, զրում է Գր. Խալաթյանցը, «Կոկիկ ժողովածուի տեսքով, ուր բազմատեսակ ազգագրական նյութերը՝ շնորհիվ իրան ծրագրողին միայն հատուկ ոճին (ընդգծումը – Ա. Պ.), կենդանի կերպով կապված էին իրար հետ և մի սիրուն ամրող-ջություն կազմում, մի երևույթ, որ դեռ տեսնված չեր մեզանում»⁹։

Գ. Սրբանձոյանցին ուղղված նամակներից մեկում Գր. Խալաթյանցը վկայում է, թե Սկրտիչ Էմինը խոսակցության ժամանակ քանից ասել է իրեն. «Ես պատրաստ եմ օգնելու դրամոք՝ «Մանանա»-ի և «Գրոց ու բրոց»-ի պատվելի ծրագրողին (ընդգծումը – Ա. Պ.) մի նոր ժողովածու ևս հրատարակելու, անզամ իմ ծախ-

⁵ Ա. Երից ան Հնդկանուր հարցեր հայոց բանաց և սովորութաց, Թիֆլիս, 1874, Սրբ. Երից ան Հնդար ընտանեկան, Թիֆլիս, 1884։

⁶ Գ. Սրբ. Վանական գրոց ու բրոց. Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 37։

⁷ Նույն տեղում, էջ 29, 34։

⁸ Նույն տեղում, էջ 73։

⁹ Նույն տեղում, էջ 79։

¹⁰ Գ. Խալաթյան թվական գրոց ու բրոց. Կոկ ժողովածու, հ. Է, Սոսկվա, 1908, էջ 42։

քով...»¹¹: Մեկ ուրիշ նամակում Գր. Խալաթյանցն օգտագործում է «... Զեր ծրագր-յալ (ընդգծումը – Ա. Պ.) «Դավիթ Սասունցի» պատվական վեպի ոռուերեն թարգ-մանության մի օրինակը...» արտահայտությունը¹²:

Ուշադրություն դարձնենք Գր. Խալաթյանցի «Չնորհիվ իրան ծրագրողին», «պատվելի ծրագրողին», «Զեր ծրագրյալ» արտահայտություններին, որոնք նշա-նակում են ոչ թե ԴԱՆ-ի գրառման համար ծրագիր կազմող, այլ ինքնատիպ կեր-պով շարադրող, հատուկ ոճով ներկայացնող: Կարծում եմ, դրանք ունեն այն նույն իմաստը, ինչ «Գրոց ու բրոց»-ի տիտղոսաթերթի վրա եղած «ծրագրողն» մակագրությունը ու Գ. Սրբանձտյանցի «իբրև հուշարար և ծրագիր» խոսքերին մեր տված մեկնարանությունը:

Հստ Գր. Խալաթյանցի՝ Գ. Սրբանձտյանցի նկարագրությունները «... գողտ-րիկ լեզվի և նուրբ ճաշակի հետ՝ զորեղ տպավորություն գործեցին ընթերցող հասարակության վրա... հայ ազգագրությունը նոր շունչ առավ, նրան հետևեցին շատերը, տալով իրենց զյուղի, քաղաքի ազգագրության նկարագիրը»¹³: Չնայած Գ. Սրբանձտյանցի շնորհիվ կենդանություն առավ հայ բանահյուսության ու-սումնասիրությունը, գրում է Գր. Խալաթյանցը, սակայն պիտի խոստովանել, որ այդ կատարածք դեռևս ամբողջական չէր, նկատելի թերություններով հավաքած նյութերը քանակի ու որակի առումով պակասավոր էին: Լույս տեսած ժողովա-ծուների մեջ չկար որոշակի կարգուկանոն, դասավորություն, հաճախ նյութերը կուտակված էին անսիստեմ ձևով: Ամեն մի սիրարան իր սեփական հայացքն ուներ առարկայի մասին, միատեսակ և որոշ ուղղություն չկար ու չէր կարող լինել: Ամենքն էլ Սրբանձտյանց չէին, որ կարողանային գրավել ընթերցողի աշքն ու միտքը: Անհրաժեշտ էր ընդմիշտ ճշտել ազգագրության այլեալ ճյուղերի սահ-մանները, որոշ սիստեմ և կարգ մտցնել կազմվող ժողովածուների մեջ ու միա-տեսակ կամ նման ձգտումների և նպատակների ծառայեցնել դրանք, որպեսզի հնարավոր լիներ հավաքվելիք նյութերը հօգուտ գիտության շահագործել: Դրա համար պես էր մի իրահանգ կամ առաջնորդ, որ ուղղություն տար հայ ազգա-րությունով գրադպողներին: Ծրագրի պահանջն էր՝ ծրագրի, որը բացակայում էր մեզանում (ընդգծումը – Ա. Պ.)¹⁴:

Ակնհայտ է, որ շուրջ հարյուր տարի առաջ գրված այս խոսքերում Գր. Խա-լաթյանցը հստակ կերպով շեշտում է, որ դաշտային նյութեր հավաքելու համար մեզանում բացակայում է ազգագրական ծրագիր-հարցարանը, ինչը թողել է իր բացական հետևանքները: Նա, թեկուզեւ ակնարկի տեսքով, չի հիշատակում ոչ միայն «Գրոց ու բրոց»-ը որպես ծրագիր, այլև գտնում է, որ պետք է «որոշ սիս-տեմ ու կարգ մտցնել» ԴԱՆ-ի գրառման աշխատանքներում: Ավելին, Գր. Խա-լաթյանցն իր կազմած ծրագիրն ուղարկում է Գ. Սրբանձտյանցին, որ դաշտային նյութեր հավաքելիս առաջնորդվի դրանով:

¹¹ Տէ՛ ս Գ. Սր վ ա ն ձ տ յ ա ն ց. Երկեր, հ. 1, Ծանոթ., էջ 636:

¹² Նոյն տեղում, էջ 638:

¹³ Գ. Խ ա լ ա թ յ ա ն ց. Նյութեր..., էջ 42-43:

¹⁴ Նոյն տեղում:

«Գրոց ու բրոց»-ին՝ որպես ծրագրի, անդրադարձել է նաև Ա. Շահնազարյանը: Սկզբնական շրջանում, գրում է նա, Գ. Մրվանձտյանցը հավաքում է տարրեր բնույթի նյութեր հայ ժողովրդի կենցաղի վերաբերյալ, սակայն «դժբախտաբար այս ուղղությամբ գրվածներից բնավ չի երևում, թե Գ. Մրվանձտյանցը սկսելով հավաքել երգերը, ունեցել է որոշ ծրագիր կամ առաջնորդվել է որևէ ուղղությամբ» (ընդգծումը – Ա. Պ.):¹⁵ Ավելին, նա «Գրոց ու բրոց»-ը հրատարակել է երկյուղով և ուրիշների թելադրանքով, կասկածելով, թե քննադատները նրան կարող են դատապարտել այդպիսի նյութեր հրատարակելու համար: Երբ նկատեցին նրա հրատարակած նյութերը պարբերականներում, սկսեցին խրախուսել նրան, որ դրանք հրատարակի առանձին գրքով:¹⁶

Ա. Շահնազարյանը «Գրոց ու բրոց»-ը համարել է «... ընդհանուր տեսություն, քան մշակված մի գործ»¹⁷: Նրա բնորոշմամբ «Գ. Էպիսկոպոս Մրվանձտյանցի այս գրվածքն իսկապես ծրագրի բնույթ ունի, միայն կազմված է անփոյթ ու արագ կերպով: Այս ծրագրից երևում է, որ նա ծանոթ էր բազմաթիվ ժողովրդական ավանդությունների, գրույցների, առասպելների հետ, ժողովրդական բառերի ահազին պաշար ունի: Սա մի հարուստ ծրագիր է ժողովրդական բազմաթիվ նյութերի, որ եթե հաջողվեր նույնությամբ հավաքել, այն ժամանակ կունենայինք մի հսկայական աշխատանք: Բայց այս ծրագիրը կազմված է շատ անփոյթ ու վայրի վերո, ուստի մի ամբողջական պատկեր չի ստացվում: Զարմանալին այն է, որ այս ծրագիրը կազմելիս նա ոչ մի գրավոր աղյուր չի ունեցել»¹⁸ (ընդգծումները՝ Ա. Պ.): Այս շարադրանքում Ա. Շահնազարյանը հինգ անգամ «Գրոց ու բրոց»-ը համարել է ծրագիր, չնայած դրա «անփոյթ ու վայրի վերո» կազմված լինելուն: Կարծում ենք, ավելի ընդունելի է «Գրոց ու բրոց»-ին տրված նրա նախնական բնորոշումը, ըստ որի այն «ծրագրի բնույթ ունի»: Իսկապես, այդ աշխատանքի առաջին մասն ինչ-որ չափով ծրագրված շարադրանք է և ոչ թե ԴԱՆ-ի հավաքման ծրագիր–հարցարան:

Այս ինդրին անդրադարձել է նաև Գ. Բդյանը՝ գրելով. «Սակայն Գ. Մրվանձտյանցի ամենամեծ ծառայությունը բանահավաքչության գործի կազմակերպումն էր: Նրան հետևեցին շատերը՝ ձեռքի տակ ունենալով նրա ծրագիրը՝ «Գրոց ու բրոց»-ը» (ընդգծումը – Ա. Պ.):¹⁹

Գ. Բդյանի այս բնութագրումը կարք ունի հստակեցման. Գ. Մրվանձտյանը ոչ թե կազմակերպեց բանահավաքչական աշխատանքներ, այլ նրա գործերը տասնյակ մարդկանց մեջին դեպի հայոց ավանդական բարքերն ու սովորությունները գրառելու գործին: Ինչ վերաբերում է, թե «շատերը՝ ձեռքի տակ ունենալով նրա «Գրոց ու բրոց»-ը» որպես ծրագիր, մեկնում էին բանահավաքչության, քիչ

¹⁵ Ա. Շահնազարյանը գարեգին եպիսկոպոս Մրվանձտյանցի երկերը (մահվան քառասուն ամյակի առթիվ). – «Ազգագրական հանդես» (այսուհետ «ԱՀ»), զիրք 24, Թիֆլիս, 1913, էջ 116:

¹⁶ Նոյն տեղում:

¹⁷ ԱՀ, զիրք 25, 1913, էջ 85:

¹⁸ Նոյն տեղում, էջ 88:

¹⁹ Գ. Բդյանը ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 20:

համոզիչ է, քանի որ այդ աշխատանքով մինչև իսկ այսօրվա պրոֆեսիոնալ ազգագրագետի համար դժվար կլինի ԴԱՆ-ի հավաքումը:

Շարունակելով իր միտքը՝ Վ. Բդյանը գրել է. «Գրոց ու բրոց» յուրօրինակ ծրագիրն իր կառուցվածքով ու հարցերի առաջադրումներով, իհարկե, միանգամայն տարբերվում էր Եվրոպայում և այլուր կազմվող ծրագրերից, որովհետև հեղինակը ծանոթ չէր դրանց: Նա իր բնատուր խելքի ու տաղանդի շնորհիվ առաջարկել էր մի ծրագիր, որը համապատասխանում էր դարի քաղաքական ու մշակութային պահանջներին (ընդգծումը – Ա. Պ.): Այդ ծրագիրը, որպես առաջին փորձ, անշուշտ, թերի չէր. հարցերը արդի հասկացությամբ չէին սիստեմակորպած, թեմայավորված ու համարակալված և վերաբերում էին ոչ միայն ազգագրությանն ու բանահյուսությանը, այլև բարբառագիտությանը, հնախոսությանը, բանագիտությանը և այլն»²⁰: Որպեսզի հիմնավորի «Գրոց ու բրոց»-ի ազգագրական հարցարան լինելը, Վ. Բդյանը հարցերի է վերածում աշխատանքի շարադրանքը²¹: Եթե հարցին մոտենանք այս տեսանկյունից, ապա ավելի տրամարանական կլիներ ծրագրի հավակնություն վերագրել Գ. Սրվանձոյանցի «Մանանա» և «Համով հոտով» աշխատանքներին: Ճիշտ է, հեղինակը դրանցում «ծրագրող» բառը չի օգտագործել և չի դիտել իրեն «հուշարար», սակայն, կարծում ենք, որ այս երկու աշխատանքներն ավելի են հավակնում ծրագրի, քան «Գրոց ու բրոց»-ը: «Մանանա»-ի միայն բովանդակության հիշեցումն այդ է վկայում. Հայրենյաց համն ու հոտը, Հայրենյաց վեպը և գրույցը, Երգ և նվազ հայրենյաց և այլն²²: Նույնքան խոսուն են նաև «Համով հոտով»-ի ճաշակները. Քանի մը քաղցրություններ, Քանի մը տեսարաններ, Քանի մը հերիաթներ, Գեղջկական երգեր և այլն²³:

Դժվար չէ նկատել, որ այս երկու աշխատանքները հանդես են զայիս որոշակի կանոնակարգված տեսքով, որտեղ նյութերի դասակարգումն ու շարադրանքն այնպիսի բժամնդրությամբ է արված ու թեմայավորված, որ ոչ մի դժվարություն չի ներկայացնում դրանք ծրագիր-հարցարանի ծառայեցնելու, հարցաշարի վերածելու: Մինչդեռ «Գրոց ու բրոց»-ի ծրագրի հավակնությունը շատ ավելի խնդրահարույց է:

Այս խնդրին անդրադառն է նաև Ա. Նազինյանը: Նրա բնորոշմամբ, Գ. Սրվանձոյանցի շնորհիվ ազգագրությունը լայն ծավալ ստացավ, 1870-1890-ական թվականներին՝ շուրջ 20 տարիների ընթացքում, մեծ հետաքրքրություն առաջացավ հայ ազգագրության ու բանահյուսության նկատմամբ, այդ գործին լծվեցին տասնյակ ու տասնյակ բանահավաքներ, սակայն գրառված նյութերը թերի ու պակասավոր էին: «Այդ թերացումներն ու պակասությունները, սակայն, հետևանք էին ... ազգագրության ու բանահյուսության որևէ փոքրիշատե համակարգված հարցարան ուղեցույցի բացակայության...» (ընդգծումը – Ա. Պ.)²⁴:

²⁰ Նույն տեղում, էջ 17

²¹ Նույն տեղում, էջ 17-18:

²² Գ. Սր վ ա ն ձ տ յ ա ն ց. Մանանա.- Երկեր, հ. 1:

²³ Գ. Սր վ ա ն ձ տ յ ա ն ց. Համով հոտով.- Երկեր, հ. 1:

²⁴ Ա Ն ա զ ի ն յ ա ն . Ժողովրդագիտությունը հայ պարբերականներում,

Այս գնահատականի մեջ ևս որևէ խոսք չկա «Գրոց ու բրոց»-ի վերաբերյալ՝ որպես ազգագրական ծրագրի: Ավելին, ծավալած հսկայական բանահավաքչական աշխատանքի թերի ու պակասավոր հիմնական կողմը, մինչև Գր. Խալաթյանցի «Ծրագրի» հրատարակումը, Ա. Նազինյանն իրավացիորեն բացատրում է հայ իրականության մեջ «համակարգված հարցարան ուղեցույցի» բացակայությամբ:

Մեր օրերում խնդրու առարկային անդրադարձել է նաև Ռ. Նահապետյանը: «Գր. Խալաթյանցը, սակայն, 1887 թ. հրատարակած իր այդ «Ծրագիրը» համարում էր առաջին փորձը, – գրում է Ռ. Նահապետյանը, – որից երեսում է, որ նա Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց»-ը ծրագիր չի դիտել: Այս ծրագիրը չեն կռահել նաև Ե. Լալայանը, Ստ. Լիսիցյանը և հայ ազգագրության մյուս երախտավորները»²⁵ (ընդգծումը – Ա. Պ.): Ինչո՞ւ: Որովհետև հեղինակը իր ծրագիրը արդի իմաստով չի համակարգել, հարցերը չի թեմավորել ու համարակալել, որովհետև առաջադրված հարցերը շաղկապել է պատասխան նկարագրերի հետ: Ընթերցողները և գիտնականները բոլոր պարագաներում ընդունել են «Գրոց ու բրոց»-ի բարերար-վարակիչ ազդեցությունը, բայց չեն նկատել, որ հեղինակն այն ներկայացրել է իբրև ծրագիր»²⁶ (ընդգծումը – Ա. Պ.):

Պետք է ավելացնել, որ «Այս ծրագիրը չեն կռահել» ու «նկատել» նաև Ա. Ղանալանյանը, Ս. Հարությունյանը, Ա. Ղազինյանը, Ա. Նազինյանը, Է. Կոստանդյանը և այլոք, մինչդեռ Վ. Բդյոյանն այն կռահել էր 1946 թվին²⁷: Ուսումնասիրողները ինչպէ՞ս կարող էին չնկատել, չկրահել կամ կռահել, երբ Գ. Սրվանձտյանցն ուղղակի շեշտել է, որ «Գրոց ու բրոց»-ը ներկայացնում է «իբրև հուշարար և ծրագիր»: Պարզապես, ուսումնասիրողներն անհրաժեշտ չեն համարել անդրադառնալ Գ. Սրվանձտյանցի այս խոսքերին, քանի որ ձևով ու բովանդակությամբ «Գրոց ու բրոց»-ը չի կարող դիտվել իբրև ծրագիր: Ռ. Նահապետյանը, անդրադառնալ Գ. Սրվանձտյանցի «Ծրագրող», «Ծրագրեաց» խոսքերին, գրում է, որ «Մակագրության այս ձևը չի կրկնվել հեղինակի մյուս գրքերից ոչ մեկի վրա»²⁸:

Առաջարան, պր. 1, Երևան, 1985, էջ 15-16:

²⁵ Ռ. Ն ա հ ա պ է տ յ ա ն. Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական և բանահավաքչական գործունեությունը.–«Էջմիածին», Ժ, հոկտեմբեր, 2007, էջ 110:

²⁶ Նոյն տեղում, էջ 114: Ինչպէ՞ս կարող էր Գր. Խալաթյանցը «Գրոց ու բրոց»-ը ծրագիր դիտել, երբ իր «Ծրագիրը» ձևով էր Գ. Սրվանձտյանցին, որն էլ, բարձր գնահատելով Գր. Խալաթյանցի աշխատանքը, գրել է. «Վրա հասավ Զեր «Հայ ազգագրության ծրագիրը» և այն նվիրեցի երեք անձանց. «... որքան մեծ բացվեցան անոնց աչքերը ծրագրի ճառագայթներով, որ կլուսավորեր, կառաջնորդեր և կցուցաներ ամեն բան պարզ ու կատարյալ: Մեծ գործ և պիտանի է ծրագիրը» (տե՛ս Է. Կ ո ս տ ա ն դ յ ա ն. Գարեգին Սրվանձտյանց (Կանքը և գործունեությունը), Երևան, 1979, էջ 9-10):

²⁷ Ռ. Ն ա հ ա պ է տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 114: Ի միջիայլոց, Ռ. Նահապետյանը, հենվելով ձեռքի տակ եղած նյութերի վրա, Գ. Սրվանձտյանցի ծնունդը համարում է 1840 թ. դեկտեմբերի 12-ը: Սրնչելու, ըստ Ա. Ղանալանյանի՝ 1840 թ. նոյեմբերի 17-ը, որի շուրջ տվել է հետևյալ մեկնարանությունը. Գ. Շերենցի և այլոց մոտ «Սրվանձտյանցի ծննդյան ամիսն ու օրը... սխալմամբ նշված է դեկտեմբերի 12-ը: Ուղղում ենք ըստ նրա Կ. Պոլսի Շիշլիի գերեզմանոցում գտնվող գերեզմանի տապանաքար-հուշարձանի վրա եղած մակագրության» (տե՛ս Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Գարեգին Սրվանձտյանց.–տե՛ս Գ. Ս ր վ ա ն ն ա լ ա ն յ ա ն գ. Երկեր, հ. 1, էջ 8):

²⁸ Ռ. Ն ա հ ա պ է տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 115:

Կարծում ենք, մեր կողմից այդ բառերի բացատրությունը՝ Գր. Խալաթյանցին հեղեղով հանդերձ, տալիս է դրանց իմաստային բովանդակությունը: Թե ինչո՞ւ չ-կան այդ բառերը մյուս աշխատանքների վրա, նույնպես հասկանալի է: Բոլոր գրքերի ճակատին հեղինակը դրանք չեր դրոշմելու ու «հուշարար և ծրագիր» առաջարկելու: Ուշագրավ է Ռ. Նահապետյանի կողմից «գրոց ու բրոց» բառերին տրված հետևյալ բացատրությունը. «... Գրոց»-ը այն է, ինչ հեղինակը գրի է առել իրեն ազգագրական և բանահյուսական հում նյութեր, իսկ «բրոց»-ը ակնհայտութեն խորհրդանշական է՝ «բրել, պեղել, պատմել տալ և գրի առնել» նշանակությամբ: Ուրեմն՝ «Գրոց ու բրոց» վերտառությունը այլ կերպ նշանակում է «Գրառումներ և հարցեր» (բանահավաքների համար): Ասել է, թե՝ գրքի անունն այլ կերպ կարելի է կարդալ «Գրառումներ ու հարցեր և Սատունցի Դավիթ կամ Մհերի դուռ» (ընդգծումը – Ա. Պ.):²⁹

Մնում ես զարմացած Ռ. Նահապետյանի հնարամտության վրա: Եթե վերոհիշյալ հեղինակները ժամանակին բերել են ինչ-որ կրվաններ՝ «Գրոց ու բրոց»-ը ծրագիր համարելու նպատակով, ապա Ռ. Նահապետյանը, նրանց կարծիքն ընդունելով հանդերձ, ստուգարանում է նաև աշխատանքի վերնագիրը, «Գրոց ու բրոց»-ը դարձնում «Գրառումներ և հարցեր» (բանահավաքների համար):

Աղա Հովսեփի Իզմիրյանին ուղղած նամակում, Գ. Մրվանձտյանցը անդրադառնալով «բրչին ու գրչին», գրում է, որ մարդն ինքն իրեն լավ ճանաչելու համար, պետք է լավ իմանա իր անցյալն ու ներկան. «Հողերու խավերը, ջրերու խորերը, շինից փլատակներն ու ավերակները փորիփորել և խառնել պետք է բրչով ու գրչով (ընդգծումը – Ա. Պ.), և ազգ յուրաքանչյուր՝ յուր նախնյաց անձանց և արարոց ծանոթ առնել...»³⁰:

Խոսելով Գ. Մրվանձտյանցի հարուստ ժառանգության արժնորման շուրջ՝ Ա. Ղանալանյանը նկատել է, որ «... Մրվանձտյանցը բացեց մեր բազմադարյան բանարվեստի, ժողովրդական կյանքի, հայոց աշխարհի մինչ այդ փակ մնացած գաղտնարանների դրները և առաջին անգամ իր ամրող համ ու հոտով հայ հասարակայնությանը ծանոթացրեց այնտեղ եղած մեծագույն արժեքներին»³¹: Շարունակելով իր միտքը՝ Ա. Ղանալանյանն ավելացնում է. «Մրվանձտյանցը առաջիններից մեկն էր մեզանում, որն իր հայտնաբերած հարուստ նյութերով մեծապես նպաստեց հայ բանագիտության, ազգագրության, գրականության ու հնագիտության զարգացմանը: Նա մի նոր աշխարհ բացեց հայ գիտնականների ու գրողների առջև, առատ նյութ մատակարարելով նրանց հետազոտությունների և գրական ստեղծագործությունների համար»³² (ընդգծումը – Ա. Պ.): Ա. Ղանալանյանը «Գրոց ու բրոց»-ը բնութագրել է որպես «ավանդությունների ու գրույնների ժողովածու»: Իսկ լստ Ա. Հարությունյանի՝ «Գրոց ու բրոց»-ը, «... ինչպես նաև Գ. Մրվանձտյանցի հետագա տարիներին հրատարակած ժողովածուները մեծ զարկ են տալիս ժողովրդագիտական նյութերի գրառմանն ու

²⁹ Նոյն տեղում:

³⁰ Տե՛ս Գ. Մրվանձտյանը՝ «Գրոց ու բրոց»-ը, «...

³¹ Ա. Ղանալանյանը՝ «Գրոց ու բրոց»-ը, բնութագրել է որպես «ավանդությունների ու գրույնների ժողովածու»:

³² Նոյն տեղում, էջ 23:

հրատարակմանը: Գ. Մրկանձտյանցը դառնում է հայ բանահավաքչության ուսիշիրան՝ ուղի հարթող առաջամարտիկը: Նրա հետևողաբար ԽIX դարի վերջին քսանամյակում, հայ բանագիտության մեջ հանդես է գալիս բանահավաքների մի ամբողջ սերունդ, որի անդուլ ջանքերով գրառվում և տպագրվում է ժողովրդական կենդանի բանահյուսության մի պատկառելի ժառանգություն»³³ (ընդգծումը – Ա. Պ.): Կարծում ենք այս կտրվածքով պետք է արժնորել «Գրոց ու բրոց»-ը և ոչ թե դրանում ծրագիր փնտրել:

Այսպիսով, կասկածից վեր է, որ Գ. Մրկանձտյանցը «Գրոց ու բրոց»-ի շարադրանքում փորձել է ձեռքի տակ եղած նյութերն ինչ-որ չափով իմբավորել ու դասակարգել: Թե քանի բանահավաք է օգտվել «Գրոց ու բրոց»-ից որպես ծրագրի, դժվար է ասել: Մինչդեռ հեղինակի կողմից իրեն տրված գնահատականը՝ «Ես իրրեն մեղու ապրած ու աշխատած եմ»³⁴ արտահայտությունը հաստատում է, որ Գ. Մրկանձտյանցն իր բանահավաքչական գործունեությամբ, մեր ավանդական բարքերն ու սովորույթները զրի առնելու ինքնատիպությամբ, այնպիսի հետաքրքրություն առաջ բերեց, որ բոլորը ցանկանում էին լծվել բանահավաքական աշխատանքի: Որ Գ. Մրկանձտյանցի շնորհիվ ազգագրությունը նոր ճաշակ ստացավ, անժիստելի է, սակայն, դա ոչ թե նրա կողմից կազմված ծրագրի արդյունք էր, այլ հեղինակի մեղվազան աշխատանքի, դարերի խորքից եկած մեր ավանդապահ բարքերն ու սովորույթները բանավոր խոսքից զրական երկի վերածելու հետևանքը:

Կարծում ենք, որ մեր ազգային էպոսի հայտնագործումը Գ. Մրկանձտյանցի կողմից, բավական կլիներ, որ նա դասվեր հայ ժողովրդագիտության երախտավորների շարքը: Ուսումնասիրողների կողմից նրան վերագրվող առաջին ծրագրի կազմման պատիվը, որը խիստ հարցական է, ոչինչ չի ավելացնում Գ. Մրկանձտյանցի վաստակին ու փառքին:

Զարմանալին այն է, որ հայ ազգագրության մեջ կարող ես հանդիպել վերոհիշյալ աշխատանքներն ամեն գնով ազգագրական հարցարան համարելու ջանքերի, սակայն մի խոսք չես գտնի Հայոց ազգագրական ընկերության կողմից 1907 թ. հրատարակած «Ծրագիր հայոց ազգագրական թանգարանի համար նյութեր հավաքելու» հարցարանի մասին³⁵, որն այսօր ևս խիստ արդիական է: Տասնամյակներ առաջ, առիթ ենք ունեցել այդ ծրագրից առնչվելու ձենորսության և որտորդության բաժինների հետ, որոնց համառոտ բովանդակությունը ցանկանում է ներկայացնել: Ձենորսության բաժնում տրված է այս բնագավառի վերաբերյալ դաշտային նյութեր գրառելու և թանգարանային հավաքածուներ ստեղծելու հակիրճ ծրագիրը, որի մի փոքր ընդլայնումից հետո այսօր ևս կարելի է օգտագործել: Դրանում տրված է ձևան տեսակները, որսալու պարագաներն ու եղանակները, քարիքերը, ցանցերը, եղեգից ու ուռենու ճյուղերից պատրաստած մակույկները, ձուկ տեղափոխելու միջոցները, կողովի, ցանցի պատրաստման

³³ Ս. Հարությունյան. Հայագիտություն. – Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 916–917:

³⁴ Գ. Մրկանձտյան. Գրոց ու բրոց, էջ 30:

³⁵ Ծրագիր Հայոց ազգագրական թանգարանի համար նյութեր հավաքելու. – ԱՀ, գիրք 16 (հավելված), 1907, էջ 126:

ժողովրդական հմտությունները: Առավել քան հարուստ են ձկնորսությամբ պայմանավորված ժողովրդական հավատալիքները, արարողությունները, աղոթքները, լճերում փոթորիկները կանխելու, ձկներին գրավելու հմայական եղանակները և այլն: Նույն սկզբունքով է կազմված որտորդության վերաբերյալ հարցաշարը. որսի տարբեր եղանակները՝ օղապարանով, ցանցերով, բազենով, շներով կենդանիներ ու թռչուններ որսալու հմտությունները, փողեր հնչեցնելը և այլն³⁶:

Միգուցե այս ուշագրավ ծրագիրը շրջանցվել է այն պատճառով, որ հրատարակվել է Գր. Խալաթյանցի «Ծրագրից» ավելի ուշ, սակայն ծրագիրն իր տեսակի մեջ եղակի է, ինչպես Գր. Խալաթյանցի կազմածը: Ուստի, ուսումնասիրողների կողմից վերոհիշյալ ծրագրի շրջանցումը պետք է անարդարացի համարել:

Մեզանում զիտական առաջին ծրագիր-հարցարանի կազմումն ու հրատարակումը պատկանում է Գր. Խալաթյանցին: Ինչպես ինքն է վկայում, ծրագրի ստեղծման զաղափարն իր մոտ ծագել է այն ժամանակ, երբ նյութեր էր հավաքում ուսուսական ժողովրդական բանավոր գրականության շուրջ: Նա որոշում է հայ ազգագրության համար կազմել ծրագիր-հարցարան, առանց որի հնարավոր չէր ազգագրությունը դնել զիտական հիմքերի վրա: Գր. Խալաթյանցն իրավացիորեն գտնում էր, որ ավանդական կենցաղի շատ ծեսեր ու սովորույթներ տեղի են տալիս՝ չդիմանալով նորամուծություններին. «Կանցնի շատ-շատ մի կես դար, և այդ՝ շատ կողմից թանկագին կտակը կկորչի անդարձ, եթե օրով առաջ հոգ չտանենք խնամքով արձանագրելու նրան և պահելու զիտության համար և մեր այդպիսի անփույթ վերաբերության համար անվերջ պետք է նախատեն ու դատապարտեն մեզ եկող սերունդները»³⁷: Անդրադառնալով իր կազմած «Ծրագրին»՝ Գր. Խալաթյանցը գրել է. «Մեր ծրագիրն ունեցավ դրական նշանակություն, ոչ միայն ավելացավ բանասացների թիվը... այլև... նրանց աշխատություններին որոշ սիստեմ և զիտական դասավորություն հաղորդվեց» (ընդգծումը – Ա. Պ.)³⁸:

«Ծրագիրը» նպաստեց մասնագիտական հանդեսներ հիմնելուն: Այսպես, Ե. Լալայանի ջանքերով հիմնված «Ազգագրական հանդեսը» (1896-1916 թթ.) հրատարակեց 26 գրքերով: Գր. Խալաթյանցի ջանքերով լրիս տեսավ «Էմինյան ազգագրական ժողովածուն» (1901-1913 թթ.)՝ ինք գրքով: Ս. Գյուլամիրյանցը Պետերբուրգում 1887 թ. հրատարակեց «Արաք» պատկերազարդ հանդեսը, Կ. Պոլսի «Արևելքը» 1889 թ. նույնիսկ ամբողջ հատվածներ արտատպեց «Ծրագրից», 1897 թ. Կ. Պոլսում լրիս տեսավ Գ. Անդրեայանի «Բյուրակն» շաբաթաթերթը, որը հասուն բաժին բացեց ազգագրության համար: Ազգագրական արժեքավոր նյութեր հրատարակեց «Հանդես ամսօրյան»՝ մեծ հետաքրքրություն առաջացնելով դեպի ազգագրությունն ու բանահյուսությունը: Այս ամենի հետևանքով հրատարակվեցին բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք գրված են ինչպես

³⁶ Նույն տեղում:

³⁷ Գ. Խ. Ա և լ ա թ յ ա ն ց. Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների, Սոսկվա, 1887, էջ Հ:

³⁸ Գ. Խ. Ա և լ ա թ յ ա ն ց. Նյութեր..., էջ 48:

գրավոր ազգագրական վկայությունների, այնպէս էլ հեղինակների կողմից գրառված ԴԱՆ-ի հիման վրա:

Գր. Խալաթյանցի բնորոշմամբ, եղած նյութերն ավելի շատ հավաքչական բնույթ ունեն: «Այդ պատճառով էլ մեր ունեցածը հայ ազգագրության նյութեր են միայն, իսկ գիտական ազգագրություն դեռևս չկա մեզանում (ընդգծումը – Ա. Պ.) և չի լինի, մինչև որ այդ նյութերով ոչ թե անձնական զվարճության կամ հետաքրքրության տեսակետից, այլ՝ ազգային ինքնաճանաչողության էական պահանջներին գոհացում տալու նպատակով չգրադարձ գիտությունը և իր եզրակացությունները չառաջացնե»³⁹:

Դժվար է համաձայնվել մեծավաստակ գիտնականի կողմից XX դ. սկզբներին գրված «գիտական ազգագրություն դեռևս չկա մեզանում» խոսքերի հետ: Մինչդեռ, ըստ Դ. Վարդումյանի, «Ազգագրական գիտությունը Հայաստանում (ընդգծումը – Ա. Պ.) իր լիակատար իրավունքների մեջ սկսեց մտնել հատկապես 1860–1870-ական թվականներից»⁴⁰: Վ. Բղոյանի կարծիքով՝ «Սրբանձտյանցի ստեղծած ուղղության մեծագույն արժեքն այն է, որ նա ազգագրությունը որպես գիտություն (ընդգծումը – Ա. Պ.), 1870-ական թվականների սկզբին գիտական նոր հիմքի վրա դրեց»⁴¹:

Եթե 1908 թ. հրատարակած աշխատանքում Գր. Խալաթյանցը մերժում էր գիտական ազգագրությունը Հայաստանում, ապա մյուս հեղինակներն այն տեղադրում են 1860–1870-ական թվականներին: Կարծում ենք, այս բնութագրումներն անընդունելի են: Այս տարիներին Հայաստանում դեռևս ազգագրական գիտություն գոյություն չուներ, քանի որ անհրաժեշտ նախադրյալներ չկային, իսկ հիշատակված «ազգագրական բնույթի հարցարանները» թերի էին ու պակասավոր և չէին կարող նպաստել ազգագրությունը սիրողական մակարդակից գիտության վերածելու գործընթացին:

Հայ իրականության մեջ ազգագրությունը որպես գիտության կայացման սկիզբ պիտի համարել 1880-ականների վերջերը և 1890-ականների կեսերը՝ սահման ունենալով Գր. Խալաթյանցի «Ծրագիրը» և Ե. Լալայանի ջանքերով հրատարակված «Ազգագրական հանդեսը»: Իմիջիայլոց, այս մասին Դ. Վարդումյանը գրել է. «Ազգագրական հանդեսի» շնորհիվ, ազգագրությունը Հայաստանում լիովին ձևավորվեց որպես գիտության ուրույն բնագավառ, սահմանագատվելով մասնավորապես բանագիտությունից»⁴²:

Դեսր է ասել, որ առ այսօր ազգագրագետների կողմից հստակեցված չէ նաև Գր. Խալաթյանցի «Ծրագրի» կազմման աղբյուրագիտական հենքի հարցը: Անդրադառնալով այս խնդրին, Վ. Բղոյանը գրել է. «Ծրագիրը կազմելիս հեղինակը նկատի է ունեցել Գ. Սրբանձտյանցի «Գրոց ու բրոց»-ը և նրա մյուս աշխատությունները, ինչպես նաև այլ ծրագրերի ու վերելում հիշված ազգագրական հրա-

³⁹ Նույն տեղում, էջ 57:

⁴⁰ Դ. Վ. արդ ու մայակ. նշվ. աշխ., էջ 926:

⁴¹ Վ. Բ. բարձրական նշվ. աշխ., էջ 19:

⁴² Վ. Վ. արդ ու մայակ. նշվ. աշխ., էջ 929:

տարակությունների նյութերը»⁴³: Իսկ բայ Դ. Վարդումյանի՝ «Գ. Սրբանձտյանցի երկերի երեան զալը մի նոր, հուժկու խթան ծառայեց հայ ժողովրդագիտության հետագա զարգացման համար: Եվրոպական և ոռոսական ազգագրական զիտուրյան սկզբունքներին քաջատելյակ Գր. Խալաթյանցը, հիմնվելով հատկապես Գ. Սրբանձտյանցի երկերի վրա (ընդգծումը – Ա. Պ.), կազմեց գիտական հիմունքներով շարադրված առաջին համակողմանի ազգագրական հարցարանը...»⁴⁴:

Ակնհայտ է, որ երկու հեղինակներն էլ Գր. Խալաթյանցի «Ծրագրի» կազմման հիմքում հիմնականում դնում են Գ. Սրբանձտյանցի աշխատանքները, սակայն ճշմարտության դեմ չմեղանչելու համար նկատենք, որ Վ. Բդյանը բավական ընդլայնում է այդ բազան: Նրա մոտեցումը հասկանալի է. նա այստեղ ևս «Գրոց ու բրոց»-ը դիտում է որպես ծրագիր, որից օգտվել է Գր. Խալաթյանցն իր «Ծրագիրը» կազմելիս:

Կարծում ենք, այս խնդրի վերաբերյալ ավելի օբյեկտիվ ու տրամարանական է Ա. Նազինյանի տված գնահատականը. «Այդ աշխատանքը (Գր. Խալաթյանցի «Ծրագիրը» – Ա. Պ.) զլուխ բերելու համար Խալաթյանը հիմնավորապես ուսումնասիրել է հին, միջնադարյան ու նոր հայկական մշակույթը (ընդգծումը – Ա. Պ.) իրեն անհրաժեշտ բնագավառի հարկավոր փաստերն ու իրողությունները երեան հանելու և ընդհանրացնելու համար: Առանձնապես մանրակրկիտ ձևով Խալաթյանն ուսումնասիրել է հրապարակի վրա եղած հայ ազգագրության ու բանահյուսության նյութերը: Այնուհետև Խալաթյանն անդրադարձել է ոռոսական և Եվրոպական համապատասխան մասնագիտական գրականությանը (նյութեր և ուսումնասիրություններ), մասնավորապես ազգագրական–բանահյուսական ծրագիր–ուղեցույցներին»⁴⁵:

Գր. Խալաթյանցի «Ծրագրի» կազմման աղբյուրագիտական հենքի վերաբերյալ այս սպառհչ գնահատականը ցանկալի կլիներ, որ տրված լիներ ազգագրակետների կողմից:

Գր. Խալաթյանցի «Ծրագիրն» ընդգրկում էր 500 հարց, որոնք վերաբերում են կենցաղի ու մշակույթի ամենատարբեր բնագավառների՝ ընդգրկելով 10 բաժին. 1. Աշխարհագրական և պատմական տեղեկություններ, 2. Մարդարանական տեղեկություններ, 3. Բնակարանը և իր պարագաները, 4. Զգեստ և զարդ, 5. Կերակուր և խմիչք, 6. Կենցաղ և զբաղմունք, 7. Ընտանեկան բարք ու սովորույթ (ութ սոորարաժանումներով), 8. Հավատք (ութ սոորարաժանումներով), 9. Լեզու, գիր, արվեստ, ձեռագիր (չորս սոորարաժանումներով), 10. Ժողովրդական բանավոր գրականության տեսակները⁴⁶:

⁴³ Գ. Բ դ ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 22-23:

⁴⁴ Դ. Վ ա ր դ ո ւ մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 926-927: Ավելի ուշ լուս տեսած հոդվածում Դ. Վարդումյանը «Գրոց ու բրոց»-ը համարել է «...հայ ազգագրական բանահավաքչության առաջին ծրագիր» (տե՛ս Դ. Վ ա ր դ ո ւ մ յ ա ն. Հայ ազգագրության պատմության հակիրճ ուրվագիծ. – «Հայք», Երեան, 2006, թիվ 1, էջ 6):

⁴⁵ Ա. Ն ա զ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 18:

⁴⁶ Գ ր. Խ ա լ ա թ յ ա ն գ. Ծրագիր..., էջ 44:

«Ծրագրին» որպես հավելված կցված իրավաբանական մասը բաղկացած էր երեք գլխից՝ իրենց ստորաբաժանումներով. 1. Հասարակական կացություն և վարչություն, դատ ու պատիժ, 2. Քաղաքացիական իրավունք, 3. Քրեական իրավունք⁴⁷:

Գր. Խալաթյանցը կոնկրետ խորհուրդներ էր տալիս բանահավաքներին, թե ինչ սկզբունքով գրառել ԴԱՆ-ը՝ հարազատ մնալով տեղական խոսվածքին և ժողովրդական բնութագրումներին:

Գր. Խալաթյանցի «Ծրագիրը» լիովին բավարարում էր ժամանակի ազգագրության պահանջները: Պատահական չէ, որ այն մեզանում կիրառվեց շուրջ 60 տարի, մինչև 1946 թ. Ստ. Լիսիցյանի հարցարանի հրատարակումը⁴⁸: Այդ ուշագրավ աշխատանքի հրատարակումից անցել են տասնամյակներ, սակայն, որոշ վերապահումներով հանդերձ, այսօր էլ այն մնում է որպես անփոխարինելի հարցարան-ուղեցույց՝ դաշտային նյութեր գրառելիս:

Այսպիսով, վերոշարադրյալից կարելի է անել մի շարք եզրահանգումներ.

– Հայ գիտական ազգագրության ձևավորման ավարտի շրջան պիտի համարել 1880-ական թվականների վերջը և 1890-ական թվականների կեսերը: Այսինքն՝ Գր. Խալաթյանցի «Ծրագրի» հրատարակումը և «Ազգագրական հանդես»-ի հիմնումը, որին XX դ. սկզբներին հետևեցին «Էմինյան ազգագրական ժողովածուն», ազգագրական բնույթի մի շարք պարբերականներ և բազմաթիվ գիտական հետազոտություններ: Այս ամենի շնորհիվ ազգագրությունը դադարեց առանձին անհատների մենաշնորհը լինելուց, սիրողական մակարդակից վերածվեց գիտության՝ դառնալով լայն շրջանների համար մատչելի: Մեծ հետաքրքրություն առաջացավ հայոց ավանդական կենցաղի ու մշակույթի նկատմամբ, կանոնակարգվեցին ԴԱՆ-ի գրառման և որանք գիտական շրջանառության մեջ դնելու հիմնահարցերը:

– Հայ ազգագրության մեջ ԴԱՆ-ի գրառման ու տիպաբանման գործում գոյություն է ունեցել երկու ծրագիր-ուղեցույց: Առաջինը Գր. Խալաթյանցի «Ծրագիրն» է, երկրորդը Ստ. Լիսիցյանի «Ազգագրական հարցարանը»: Հոդվածում քննված մյուս բոլոր գործերը, որոնք տարբեր ժամանակներում որակավորվել են որպես ազգագրական ծրագիր-հարցարան, անընդունելի են, քանի որ դրանք ունեցել են սահմանափակ բնորոշություն:

– Ստ. Լիսիցյանի «Ազգագրական հարցարան»-ի լույս ընծայումից հետո անցած տասնամյակների ընթացքում ազգագրական գիտության մեջ առաջ են քաշվել բազմաթիվ նոր հիմնախնդիրներ, որոնք XX դ. 40-ական թվականները չեն կարող տեղ գտնել այդ հարցարանում: Ուստի, հայ

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Ստ. Լ. ի ս ի ց յ ա ն. Ազգագրական հարցարան, Երևան, 1946:

ազգագրության երրորդ ծրագիր-հարցարանի կազմումն ու հրատարակումը օր-
վաս հրամայական պահանջ է:

К ВОПРОСУ О ПЕРВОЙ ПРОГРАММЕ-ВОПРОСНИКЕ ПО АРМЯНСКОЙ ЭТНОГРАФИИ

АНУШАВАН ПЕТРОСЯН

Р е з ю м е

Этнография, как и другие науки, пользуется многообразными письменными источниками, однако основу этнографических исследований составляют полевые этнографические материалы, собранные в реальной действительности у конкретных сказителей. Планомерная запись и классификация этих сведений зависит от вопросников, которыми руководствуются этнографы при сборе полевых материалов. Этнографическими программами-вопросниками считались работы М. Миансаряна, Ал. Ерицяна, С. Ерицян, которые, однако имели ограниченное содержание и применение. Некоторые исследователи считали труд Г. Срванձյանца «Գրոց ու բրոց», программой, но она не может считаться таковой ни по строению, ни по содержанию. В армянской этнографии было две программы-вопросника – “Программа” Гр. Халатяна и “Этнографический вопросник” Ст. Лисициана, благодаря которым в конце XIX в. армянская этнография стала развиваться как наука.

TO THE ISSUE OF THE FIRST PROGRAMME- QUESTIONNAIRE ON ARMENIAN ETHNOGRAPHY

ANUSHAVAN PETROSYAN

S u m m a r y

Ethnography, like other sciences, uses various written sources. However, field ethnographic materials form the basis of ethnographic researches. Systematic record and classification of this information to great degree depends on the questionnaires by which are guided ethnographers while collecting field materials. Ethnographic programme-questionnaires were the works by M.Miansaryants, Al.Yeritsyan, S.Yeritsyan, which, however, had limited contents and notes. Some researchers considered G.Srvandztyants's work «Գրոց ու բրոց» a programme, though it can't be considered such either by its structure or contents. In Armenian ethnography there were two programme-questionnaires – Gr.Khalatyan's “Programme” and S.Lisitsyan's “Ethnographic Questionnaire”. Thanks to them Armenian ethnography began to develop as a science at the end of the 19th century.